



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«21» 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0 129-21

Ձեռնարկողը՝

«Փաուեր Էներջի» ՍՊԸ
Ք. Երևան, Սիլիկյան թ. 4-րդ փող. փ.9

Գործունեությունը՝ **Շողակաթ համայնքի, Շողակաթ բնակավայրի փարածքում
«Գրին Էներջի» արևային կայանի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկտրություն**
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

թիվ ԲՓ 0 129-21

«21» 07 2021թ.

Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի, Շողակաթ բնակավայրի տարածքում «Գրին Էներջի» արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Փաուեր Էներջի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնք

«Փաուեր Էներջի» ՍՊԸ կողմից ներկայացված նախագծով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի, Շողակաթ համայնքի, Շողակաթ բնակավայրի տարածքում՝ 19-րդ փողոց 12 հողամասում «Գրին Էներջի» արևային կայանի և 110 Կվտ էլեկտրահաղորդման գծերի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3-րդ կետի գ) ենթակետի նախատեսվող արևային կայանի և 110 Կվտ օդային գծի կառուցման նախնական գնահատման հայտը դասակարգվում է Բ կատեգորիայի, արևային կայանը զբաղեցնում է 9.68364 հա տարածք և համաձայն Օրենքի ենթակա չէ ՇՄԱԳ-ի և փորձաքննության: Միաժամանակ համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի (ՕԳ) կառուցումը՝ 110ԿՎ և ավելի հզորության:

Նկարագրական մաս. Գործունեությունն իրականացվելու է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 5-ի, 19-Ա որոշման համաձայն, «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությանը տրամադրված 5ՄՎտ հզորությամբ ԼԷՆ՝0665 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի, (մինչև 2041թ. դեկտեմբերի 27-ը գործողության ժամկետով) Շողակաթի համայնքապետարանի կողմից 2020թ. օգոստոսի 3-ին տրամադրված N20 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 9.68364հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նախագծի իրականացման նպատակն է՝ ապահովել Հանրապետության էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը, պահպանել և բարելավել այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունում ներդնել նոր էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:



Համաձայն հաշվետվության նախատեսվող արևային կայանի տարածքը տեղակայված է Սևանա լճի հյուսիս արևելյան մասում՝ Գեղամա լեռների ստորոտում, ծովի մակերևույթից 2030մ բարձրության վրա: Ռելիեֆը հարթ է, տեղ-տեղ բլրակային: Տեղանքի համար առավելագույն ցածր ջերմաստիճանը -32° է, բարձրը՝ $+34^{\circ}$, քամու առավելագույն արագությունը հասնում է 24-28 մ/վ-ի: Օրվա մեջ առավելագույն տեղումները (ձյուն) 40 սմ է: Տարվա ընթացքում անարև օրերի քանակը 16 օր է: Տեղանքում հորիզոնական ճառագայթումը 1774 կՎտ d/m^2 է:

Համաձայն հաշվետվության տեղանքի ուսումնասիրության համար իրականացվել է տեղագրական և երկրաբանական հետազոտություններ և չափումներ: Հետազոտությունների արդյունքները հաշվի են առնվել հողային աշխատանքների պլանավորման, կրող կոնստրուկցիաների կառուցման, բետոնային հիմքերի շինարարության իրականացման և ֆոտովոլտային խմբերի տեղաբախշման լուծումներում: Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված անտառային գորշ հողերը, տարածված է տարախոտային բուսականությունը:

Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Շողակաթ համայնքից գտնվում է 4 կմ, իսկ Արտանիշ բնակավայրից՝ 3կմ հեռավորության վրա: Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևույթային ջրային ռեսուրսը Սևանա լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 4կմ հեռավորության վրա: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բնության, պատմամշակութային հուշարձաններ չկան: Մարզի կենդանական և բուսական աշխարհը հարուստ է ու բազմազան, սակայն գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

Գործունեության տարածքին ամենամոտ բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ազգային պարկն է, որը գտնվում է մոտ 4կմ հեռավորության վրա: Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, Ծաղկունք- Սոթք 141կմ երկարությամբ ճանապարհը, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության վայրից կազմում է մոտ 698մ:

Համաձայն հաշվետվության գործունեության հարակից տարածքում՝ մոտ 200մ հեռավորության վրա գտնվում են 2ՄՎտ հզորությամբ «Արտանիշ 1» և «Արտանիշ 2» արևային կայանները: Հարակից տարածքները գյուղատնտեսական մշակովի ցանքատարածություններ և արոտավայրեր են:

Նախատեսվող «Գրին էներջի» արևային կայանի տեխնիկական ցուցանիշներն են՝

- արևային կայանը կազմված է 5876 հատ 525Վտ հզորությամբ և 5824 հատ 520Վտ հզորությամբ միաբյուրեղային, երկերեսանի ֆոտովոլտային վահանակներից (չափերը 2274x1134x35մմ):

- Ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են հենակառուցվածքի (կրող կոնստրուկցիա) վրա՝ ուղղահայաց դիրքով և հորիզոնի նկատմամբ 30° անկյան տակ: Հենակառուցվածքը կառուցվելու է ցինկապատ պողպատից: Հիմնասյուների ամրակցումն իրականացվելու է բետոնային հիմքերի մեջ: Նախատեսվում է երկու տեսակի հենակառուցվածք՝ 52 և 26 հատ վահանակների համար:

- Կայանը բաղկացած է լինելու 25 էլեկտրաէներգետիկ բլոկներից, որոնցից յուրաքանչյուրին էլեկտրականապես միացվելու է մեկական փոխակերպիչ: Բոլոր փոխակերպիչները կունենան 200 կՎտ նոմինալ ելքային հզորություն, որոնց կմիանան 18 ֆոտովոլտային խմբեր, յուրաքանչյուր խմբում՝ հաջորդաբար մոնտաժված 26 վահանակ: Փոխակերպիչները ցանցային (On-Grid) տեսակի են, ելքում կապահովեն 0,8կՎ տաֆազ

